ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հ. ՀԱԿՈԲՅԱՆԻ՝ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը**
   Հրանուշ Հակոբյան
2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀՀ սփյուռքի նախարար
3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   - Ֆրանսիայի Հանրապետություն և Շվեյցարիայի Համադաշնություն ս. թ. նոյեմբերի 23-ից դեկտեմբերի 1-ը
4. **Հրավիրող կողմը՝**
   - Մարսելի Սրբոց Թարգմանչաց եկեղեցու և մշակութային կենտրոնի ատենապետ Ռոբերտ Ազիլազյան, Սահակ-Մեսրոպ երգչախմբի հիմնադիր ղեկավար Խաչիկ Յիլմազյան,
   - Ֆրանս-հայկական առևտրի և արդյունաբերության պալատի նախագահ Բեռնար Հատեմյան:

5. **Գործուղման նպատակը՝**
   - Մասնակցություն Սահակ-Մեսրոպ երգչախմբի հիմնադրման 40-ամյակին նվիրված համերգին,
   - Մասնակցություն Ֆրանս-հայկական առևտրի և արդյունաբերության պալատի հիմնադրման 25-ամյակին նվիրված միջոցառմանը,
   - Համայնքային հանդիպումների կազմակերպում:

6. **Քննարկման թեմաները՝**
   - «Հայաստան-Սփյուռք» 6-րդ համաժողովի արդյունքների մասին,
   - Համայնքային կառույցների ղեկավարների հետ «Հայաստան-Սփյուռք» 6-րդ համաժողովի արդյունքներից բխող ծրագրերի իրականացման մասին,
   - 2018թ. Հայաստանում անցկացվելիք ֆրանկոֆոն պետությունների և կառավարությունների ղեկավարների 17-րդ գագաթնաժողովի մասին,

- 2018 թ. Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված միջոցառումների մասին,
- 2018թ. Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված միջոցառումնեի մասին,
- ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ սկսված «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման ընդլայնում,
- «Բուլուկյան» հիմնադրամի մասնաճյուղի բացում Հայաստանում,
- Սևան և Գրենոբլ քույր քաղաքների համագործակցությանը վերաբերող հարցեր,
- Տուրիզմի զարգացմանը նպաստող քայլերի և բիզնեսմենների խմբերի Հայաստան այցելությունների կազմակերպում:

7. Հանդիպումները, ելույթները, հարցազրույցները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հանդիպումներ՝

- Մարսելում ՀՀ գլխավոր հյուպատոս Վարդան Սրմաքեշի և հյուպատոսության աշխատակիցների հետ,
- Բուշ Դյու Ռոնի մարզպետ տիկին Մարտին Վասսալի հետ,
- Ֆրանսիայի ԱԺ պատգամավոր Դանիել Կազարյանի հետ
- Մարսելի քաղաքապետ Ժան Կլոդ Գոդենի հետ,
- Լիոնի քաղաքապետ Գևորգ (ժորժ) Կեպենեկյանի հետ,
- Վալանսի քաղաքապետ Նիկոլյա Դարագոյի հետ,
- Բուրգ-լե Վալանսի քաղաքապետ Մարլեն Մուրրիեի հետ,
- Գրենոբլ քաղաքի քաղաքապետ Էրիկ Պիոլի հետ,
- Դեսին քաղաքի քաղաքապետ Լորանս Ֆոտրայի հետ,
- Մարսելի փոխքաղաքապետ Դիդիե Փարաքյանի հետ,
- Դեսինի փոխքաղաքապետ Դենիս Ջորկայեֆի հետ,
- Դրոմ դեպարտամենտի փոխնախագահ Վերոնիկ Պուգիետի հետ,
- Ֆրանս-հայկական առևտրի և արդյունաբերության պալատի նախագահ Բեռնար Հատեմյանի հետ,
- Մարսելի Սրբոց Թարգմանչաց եկեղեցու և մշակութային կենտրոնի խորհրդի հետ՝ ատենապետ Ռոբերտ Ազիլազյանի գլխավորությամբ,
- Սահակ-Մեսրոպ երգչախմբի հիմնադիր ղեկավար Խաչիկ Յիլմազյանի հետ,

- Դեսինի հայ հուշագրության ազգային կենտրոնի աշխատակիցների հետ,
- Մարսելի «Համազգային» ամենօրյա վարժարանի հոգաբարձուների խորհրդի անդամների հետ (նախագահ՝ Բրիջիտ Մարկոյան),
- Մարսելի «Համազգային» ամենօրյա վարժարանի տնօրեն Սեդա Բիբերյանի և ուսուցչական անձնակազմի հետ,
- Ժնևի «Թոփալյան» վարժարանի տնօրեն Անի Մեսրոպյանի և ուսուցչական անձնակազմի հետ,
- Մարսելի «Խաչատուր Աբովյան» դպրոցի տնօրեն Կարեն Խուրշուդյան և ուսուցչական անձնակազմի հետ,
- Պոլսո Հայոց պատրիարքի տեղապահ Գարեգին արքեպիսկոպոս Բեկչյանի հետ,
- Ֆրանսիայի Հայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տեր Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանի հետ,
- Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Շվեյցարիայի թեմի Առաջնորդական տեղապահ Տեր Գուսան վարդապետ Ալաջանյանի հետ,
- Կենտրոնական Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի անդամների հետ (CCAF) (ատենապետ Ռաֆֆի Գրիգորյան),
- Վալանսի հայ մշակույթի կենտրոնի ղեկավար Նազո Ջինբաշյանի հետ,
- Գրենոբլի մշակույթի տան նախագահ Սիրանույշ Խաչատրյանի և Գրենոբլում գործող հայկական կազմակերպությունների ղեկավարների հետ,
- Լիոնի «Բուլուկյան» հիմնադրամի պատասխանատուների հետ,
- «Ռադիո Ա»-ի խմբագրակազմի հետ (տնօրեն՝ Ժորժ Ավեդյան),
- Ֆրանսահայ և շվեյցարահայ գործարարների հետ,
- Ֆրանսիայի տարբեր համայնքների և Շվեյցարիայի հայ համայնքների ներկայացուցիչների հետ,
- Լիոնի «Մարգարյան-Փափազյան» վարժարանի աշակերտների և ուսուցիչների հետ:

Ելույթներ՝

- Մարսելում ՀՀ գլխավոր հյուպատոսությունում՝ համայնքային գործիչների հավաքի ժամանակ, որին ներկա էր Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը:
- Մարսելի «Համազգային» ամենօրյա վարժարանում, ուսուցչական անձնակազմի հետ հանդիպման ժամանակ,

- Մարսելում ՀՀ գլխավոր հյուպատոսությունում՝ տարածաշրջանի համայնքային կազմակերպությունների ղեկավարների հետ հանդիպման ժամանակ,
- Մարսելի «Սահակ-Մեսրոպ» երգչախմբի 40-ամյակին նվիրված հանդիսության ժամանակ,
- Լիոնի «Կարպիս Մանուկյան» սրահում համայնքի ներկայացուցիչների առջև,
- Վալանսի Երգի և պարի ակադեմիայում՝ երիտասարդների, խմբերի անդամների և ծնողների առջև,
- Վալանսի հայ մշակույթի կենտրոնում՝ համայնքի անդամների հետ հանդիպման ժամանակ,
- Վալանսի «Սուրբ Սահակ» եկեղեցու օծման 25-ամյակի հանդիսության ժամանակ,
- «Լը Սեզար» կինոթատրոնում՝ Շառլ Ազնավուրի անվան ամենամյա գրական մրցանակի հանձնման հանդիսավոր արարողության ժամանակ,
- Մարսելի Սահակ-Մեսրոպ մշակույթի կենտրոնի սրահում՝ Մարսելի Սրբոց Թարգմանչաց եկեղեցու օծման և անվանակոչության 86-ամյակի ընդունելության ժամանակ,
- «ԻՆՏԵՐԿՈՆՏԻՆԵՆՏԱԼ» հյուրանոցի սրահում՝ Ֆրանս-հայկական առևտրաարդյունաբերական պալատի հիմնադրման 25-ամյակի հոբելյանական տոնակատարության ժամանակ,
- Ժնևի «Տոպալյան» վարժարանում՝ ուսուցիչների հետ հանդիպման ժամանակ,
- Ժնևի հայկական կենտրոնում՝ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ:

Հարցազրույցներ՝

- Հարցազրույց «Ռադիո Ա»-ին,
- Երկու հարցազրույց «Ռադիո Արմենիա»-ին,
- Հարցազրույց Հ1-ի տեղական թղթակիցների հետ:

Բարձրացված հարցեր՝

- Շարունակել և ընդլայնել մասնագիտական ընկերակցությունների գործունեությունը,

- Շարունակել պայքարը Հայոց ցեղասպանության ճանաչման դատապարտման և հետևանքների վերացման ուղղությամբ,
- Աշխատանքներ տանել ֆրանսիացի, շվեյցարացի և հայ գործարարների կողմից Հայաստանի Հանրապետությունում ներդրումներ իրականացնելու համար,
- Հասնել այն բանի, որ յուրաքանչյուր հայ այցելի Հայաստան, ճանաչի իր Հայրենիքը, նպաստել տուրիզմի զարգացմանը, թափ հաղորդել «3 տարին մեկ անգամ հանգստանալ Հայաստանում» շարժմանը,
- Մասնակցել ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերին,
- Լուրջ ուշադրություն դարձնել հայոց լեզվի ուսուցման հարցերին, «Տանը խոսենք հայերեն» շարժումը դարձնել յուրաքանչյուր կառույցի խնդիրը,
- Զբաղվել համայնքից հեռացած հայերին համայնքային կառույցների աշխատանքներում ներգրավելու հարցով,
- Նախապատրաստական աշխատանքներ տանել հայրենադարձության քարոզչության ուղղությամբ,
- Կարևորել «հին» և «նոր» սփյուռքերի գործակցության հարցերը,
- Վալանսում ամենօրյա հայկական դպրոցի հիմնադրման մասին:

Նոյեմբերի 23, 2017թ.

Նախարարը ժամանեց Փարիզ, այնուհետև՝ Մարսել:

Նոյեմբերի 23, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի, Մարսելում ՀՀ գլխավոր հյուպատոս Վարդան Սրմաքեշի և Մարսելի փոխքաղաքապետ Դիդիե Փարաքյանի հետ այցելել է Սողոմոն Թեհլերյանի անունը կրող հրապարակ: Հրանուշ Հակոբյանը ներկաների հետ միասին ծաղիկներ է խոնարհել հրապարակի անվանակոչումը փաստող հուշատախտակի մոտ: Արարողությանը, որը կազմակերպել էին Մարսելի քաղաքապետարանը և Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը, մասնակցել են Մարսել քաղաքի ղեկավարությունը, մի շարք հասարակական և քաղաքական գործիչներ, Ֆրանսիայի հայ համայնքի ներկայացուցիչներ:

- Այնուհետև նույն խմբով այցելել են Մարսելում ՀՀ հյուպատոսություն և հանդիպում ունեցել համայնքի ներկայացուցիչների հետ: Նախարարը հանդես է եկել ելույթով և պատասխանել ներկաների հարցերին: Հանդիպմանը ներկա են եղել Երևանի և Մարսելի միջև ստորագրված բարեկամության և համագործակցության համաձայնագրի 25-ամյակի առթիվ պաշտոնական այցով Մարսել ժամանած Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, Մարսելում ՀՀ գլխավոր հյուպատոս Վարդան Սրմաքեշը և այլք: Հանդիպման ավարտին նախարար Հրանուշ Հակոբյանը նախարարության պարգևներ է հանձնել համայնքային գործիչներին:

Նոյեմբերի 24, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, Մարսելում ՀՀ գլխավոր հյուպատոս Վարդան Սրմաքեշը, Մարսելի փոխքաղաքապետ Դիդիե Փարաքյանը և համայնքի ներկայացուցիչները այցելել են Մարսելի կենտրոնական այգի և ծաղկեպսակներ դրել Երևանի և Մարսելի քույրացման խորհրդանիշ հանդիսացող խաչքարին:
- Այնուհետև նախարարը այցելել է Մարսելի «Համազգային» ամենօրյա վարժարան, հանդիպել վարժարանի ղեկավարությանը, շրջայց է կատարել դպրոցի դասարաններում, նախակրթարանում և մանկապարտեզում: Նախարարը նաև պարգևներ է հանձնել դպրոցի տնօրեն Սեդա Բիբերյանին և հոգաբարձուների խորհրդի նախագահ Բրիջիտ Մարկոյանին: Վարժարան այցի շրջանակներում ստորագրվել է համագործակցության հուշագիր, որով ամրագրվել է Երևանի Միսակ Մանուշյանի անվան թիվ 48 հիմնական դպրոցի և Մարսելի «Համազգային» ամենօրյա վարժարանի միջև քույրացումը:
- Նույն օրը նախարար Հրանուշ Հակոբյանը «Լը Սեզար» կինոթատրոնում մասնակցել է «Խոստումը» ֆիլմի ցուցադրմանը: Միջոցառման ընթացքում տեղի է ունեցել Շառլ Ազնավուրի անվան ամենամյա գրական մրցանակի հանձնման հանդիսավոր արարողությունը: 2017 թվականի մրցանակին արժանացել է ֆրանսիացի գրող Նիկոլա Պանյոլը՝ «Մարսել Պանյոլ, 1895-1974թթ. մի կյանքի ալբոմ» գրքի համար: Մինչ գրական մրցանակի հանձնումը, տեսաուղերձով ներկաներին ողջունել է աշխարհահռչակ

հայազգի շանսոնյեն: Մրցանակը Պանյոլին հանձնել է ՀՀ սփյուռքի նախարարը և հանդես եկել ելույթով:

- Երեկոյան նախարարը մասնակցել է «Սահակ-Մեսրոպ» երգչախմբի հիմնադրման տոնակատարությանը և համերգին, ելույթ ունեցել հանդիսության ժամանակ և պարգևներ է հանձնել երգչախմբի անդամներին:

Նոյեմբերի 25, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Մարսելում ՀՀ հյուպատոսությունում հանդիպում է ունեցել Մարսել քաղաքի և մերձակա տարածքների հայկական կազմակերպությունների և կառույցների ղեկավարների հետ, հանդես եկել ընդարձակ զեկուցումով և քննարկել են Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների, Հայաստանի տնտեսական զարգացման, Երևանի հիմնադրման 2800-ամյակի տոնակատարությունների, Հայաստանի Առաջին Հանրապետության 100-ամյակի հետ կապված հարցեր:

Առավոտյան նախարարը ժամանեց Վալանս:

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Մարսելում ՀՀ հյուպատոս Ռուբեն Խարազյանի, Լիոնում ՀՀ փոխհյուպատոս Գայանե Մանուկյանի, Արևմտյան Եվրոպայի և Ֆրանսիայի Հայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տեր Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանի ուղեկցությամբ այցելել է Երգի և պարի ակադեմիա, հանդիպել համայնքի ներկայացուցիչների, ակադեմիայի սաների հետ, դիտել երեխաների համերգը, ելույթ ունեցել նրանց առջև:
- Այնուհետև նախարարը և նրան ուղեկցող անձիք այցելել են Վալանսի հայ մշակույթի կենտրոն և «Ռադիո Ա»-ի գրասենյակ: Հանդիպմանը ներկա են եղել Վալանսի քաղաքապետ Նիկոլյա Դարագոն, Բուրգ-լե Վալանսի քաղաքապետ Մարլեն Մուրրիեն, Դրոմ դեպարտամենտի փոխնախագահ Վերոնիկ Պուգիետը: Հյուրերին ողջունել են Վալանսի հայ մշակույթի կենտրոնի տնօրեն Նազո Ջինբաշյանը և Վալանսի «Դավիթյան» մեկօրյա դպրոցի ուսուցչուհի Սուսան Փահլևանյանը, իսկ Դրոմ Արդեշի «Ապրիլ 24» կոմիտեի անունից նախարար Հրանուշ Հակոբյանին և հյուրերին ողջունել է լրագրող, «Արմենիա» միության նախագահ Գրիգոր Ամիրզայանը: Իր

ելույթի ընթացքում Հրանուշ Հակոբյանը նշել է, որ ուրախ է հյուրընկալվել Վալանսի հայկական համայնքում: Նախարարը շնորհակալություն է հայտնել Ֆրանսիայի իշխանություններին, որոնք 20-րդ դարի սկզբում իրենց հարկի տակ ընդունել են Հայոց ցեղասպանության վերապրածներին: Իր խոսքում Հրանուշ Հակոբյանն անդրադարձել է նաև Հայաստան-Ֆրանսիա ջերմ հարաբերություններին՝ կարևորելով համայնքի դերն այս հարցում: Այնուհետև ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը «Ռադիո Ա»-ի 35-ամյա հոբելյանի առիթով ռադիոկայանի տնօրեն Ժորժ Ավեդյանին է հանձնել «Ռադիո Ա»-ին շնորհված նախարարության Երախտագիտության շքանշանը, իսկ նախարարության պատվոգրերով և շնորհակալագրերով է պարգևատրել ռադիոկայանի աշխատակիցներին: Ավարտին տեղի է ունեցել փոքրիկ հյուրասիրություն:

- Այնուհետև նախարարը մասնակցել է «Սուրբ Սահակ» եկեղեցու օծման 25-ամյակին նվիրված ընդունելությանը, հանդես է եկել ելույթով, պատասխանել է ներկաների հարցերին,
- Ապա հարցազրույց տվել Հ1-ի տեղի թղթակցին:

Ուշ երեկոյան նախարարը վերադարձավ Մարսել:

Նոյեմբերի 26, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը մասնակցել է Մարսելի Սրբոց Թարգմանչաց եկեղեցու օծման և անվանակոչության 86-ամյակի պատարագին և դրան հաջորդած ընդունելությանը, որը կազմակերպվել էր եկեղեցու տիկնանց հանձնախմբի կողմից Մարսելի Սահակ-Մեսրոպ մշակույթի կենտրոնի սրահում: Ընդունելության ավարտին նախարարը խորհրդանշական նվերներ է հանձնել եկեղեցուն:

Նոյեմբերի 26, 2017թ.

Երեկոյան նախարարը ժամանեց Լիոն:

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպում է ունեցել Կենտրոնական Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների

համակարգող խորհրդի (CCAF) անդամների հետ: Հանդիպմանը ներկա են եղել ատենապետ Ռաֆֆի Գրիգորյանը, փոխատենապետ Վազգեն Էսքիջյանը, ընդհանուր քարտուղար Մկո Մխսյանը, Աննա Ժամբոն, Լիզա Ժիլիբերը և Արթուր Տերտերյանը: Հրանուշ Հակոբյանին ուղեկցում էր Լիոնում ՀՀ փոխհյուպատոս Գայանե Մանուկյանը: Իր ելույթում նախարարն անդրադարձել է Հայաստան-Սփյուռք համաժողովներին, խոսել Հայաստանի զարգացման հեռանկարների մասին: Հանդիպման ընթացքում CCAF-ի վարչության անդամներն իրենց առաջարկներ են ներկայացրել Հրանուշ Հակոբյանին:
- Այնուհետև Սուրբ Հակոբ հայկական եկեղեցուն կից «Կարպիս Մանուկյան» հանդիսասրահում նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպում է ունեցել Լիոնի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Նախարարը ներկայացրել է Սփյուռքի նախարարության ծրագրերը, կատարած աշխատանքը: Համայնքի անդամներին քաջալերել է հայրենիք այցելել, գործուն մասնակցության ունենալ հայոց պետականության հզորացմանը: Ելույթի վերջում Հրանուշ Հակոբյանը պատասխանել է հարցերին և պարգևներ հանձնել համայնքային հայտնի գործիչներին:

Նոյեմբերի 27, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը առավոտյան այցելել է Լիոնի Սուրբ Հակոբ եկեղեցի, հանդիպել ծխական խորհրդի անդամներին:
- Ապա նախարարը այցելել է «Մարգարյան-Փափազյան» ամենօրյա վարժարան, հանդիպել ուսուցիչների և աշակերտների հետ:
- Այնուհետև նախարարը հանդիպել է Ֆրանսիայի ԱԺ պատգամավոր Դանիել Կազարյանի հետ և քննարկել հայ-ֆրանսիական բարեկամության, ֆրոնկոֆոնիայի նստաշրջանը Հայաստանի Հանարպետությունում անցկացնելու հետ կապված հարցեր:
- Նույն օրը նախարարը այցելել է Դեսինի քաղաքապետարան և հանդիպել քաղաքապետ Լորանս Ֆոտրայի հետ: Նախարարը Դեսինի քաղաքապետին շնորհակալություն է հայտնել ընթացիկ տարվա սեպտեմբերին Արցախ այցելության համար, որի ընթացքում Արցախի Ճարտար քաղաքի և Դեսինի միջև ստորագրվել է բարեկամության հուշագիր: Սփյուռքի նախարարը բարձր է գնահատել Դեսինի քաղաքապետի աջակցությունը տեղի հայերին, հայկական մշակույթի և

հիշողության կենտրոնին: Հանդիպման ավարտին նախարար Հրանուշ Հակոբյանը Դեսինի քաղաքապետ Լորանս Ֆոտրային պարգևատրել է ՀՀ սփյուռքի նախարարության Երախտագիտության մեդալով: Հանդիպմանը ներկա են գտնվել Լիոնում ՀՀ փոխհյուպատոս Գայանե Մանուկյանը, Դեսինի փոխքաղաքապետ Դենիս Ջորկայեֆը, ինչպես նաև Դեսինի քաղաքային խորհրդի ազգությամբ հայ անդամները: Դեսինի քաղաքապետը նախարարին ուղեկցել է քաղաքի Հայկական մշակույթի և հիշողության կենտրոն, որտեղ տեղի է ունեցել հանդիպում հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Օրվա 2-րդ կեսին նախարարը մեկնեց Գրենոբլ

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպել է Գրենոբլ քաղաքի հայկական համայնքային կառույցների ղեկավարների և հայկական ասոցիացիաների նախագահների հետ, որոնք հակիրճ ներկայացրել են իրենց գործունեությունը, ծրագրերն ու կատարած աշխատանքները:
- Այնուհետև հայկական մշակույթի տան հանդիսությունների սրահում կայացել է ջերմ ընդունելություն: Երեկոն իրենց կատարումով բացել են հայ մանուկները, որին հաջորդել է Գրենոբլի մշակույթի տան նախագահ Սիրանույշ Խաչատրյանի ողջույնի խոսքը: Այնուհետև ներկաները դիտել են հայկական մշակույթի տան գործունեության մասին պատմող ֆիլմ: Նախարարը հանդես է եկել զեկուցումով և ներկայացրել է ՀՀ սփյուռքի նախարարության կատարած աշխատանքները, 2018 թվականին նախատեսված միջոցառումները: Ելույթի վերջում Հրանուշ Հակոբյանը պատասխանել է ներկաներին հուզող հարցերին, ապա հայապահպանության գործում ունեցած ավանդի համար նախարարության շնորհակալագրեր է հանձնել մշակույթի տան ուսուցիչներին:

Նոյեմբերի 28, 2017թ.

- Առավոտյան ՀՀ սփյուռքի նախարարը հանդիպել է Լիոնի քաղաքապետ Գևորգ (Ժորժ) Կեպենեկյանին: Հանդիպման ընթացքում զրուցակիցները կարևորել են հայ-ֆրանսիական հարաբերությունները, քննարկել են հատկապես 2018թ. հոկտեմբերին տեղի ունենալիք Ֆրանկոֆոնիայի

գագաթնաժողովի անցակցման հետ կապված հարցեր, որին նախատեսվում է Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի մասնակցությունը: Լիոնի քաղաքապետը և Սփյուռքի նախարարը քննարկել են մարտ ամսին Գևորգ Կեպենեկյանի Հայաստան կատարելիք հնարավոր այցի մանրամասները: Նախարարը և Լիոնի քաղաքապետն արծարծել են կրթության, ճարտարապետության, բժշկության ոլորտներին առնչվող հարցեր: Կարևորվել է բարձր տեխնոլոգիաների շուրջ համագործակցությունը՝ մատնանշելով Երևանում գործող Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի առկայությունը: Կողմերն անդրադարձել են նաև Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հեռանկարներին, համայնքի ակտիվությանը, հայկական դպրոցներում հայոց լեզվի ժամաքանակի ավելացման խնդիրներին, հայկական մշակույթի կենտրոնների և Հայ Առաքելական եկեղեցու գործունեությանը վերաբերող հարցերին: Կարևորվել են շախմատի մասնագետների գործուղումը Լիոն, ինչպես նաև Լիոնում շախմատի տարածման խնդիրները:

- Այնուհետև նախարարը և քաղաքապետն այցելել են Լիոնի Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների հիշատակը հավերժացնող հուշահամալիր և համայնքի անդամների մասնակցությամբ ծաղիկներ խոնարհել:
- Նույն օրը Հրանուշ Հակոբյանը հանդիպել է ֆրանսահայ գործարարների հետ և քննարկել ոչ միայն հայ, այլ նաև ֆրանսիացի գործարարների՝ Հայաստանում ներդրումներ կատարելու հնարավորությունները: Հանդիպմանը ներկա են գտվել Լիոնում ՀՀ փոխհյուպատոս Գայանե Մանուկյանը, Կենտրոնական Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի (CCAF) նախագահ Ռաֆֆի Կրիկորյանը, Լիոնի քաղաքապետարանի Հայաստանի ծրագրերի ղեկավար Իզաբել Լակյանը և պաշտոնատար այլ անձինք:
- Այնուհետև ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն այցելել է Լիոնի «Բուլուկյան» հիմնադրամ: Նախարարը շրջայց է կատարել հաստատության սրահներում և ծանոթացել հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերին: Հրանուշ Հակոբյանն առաջարկել է Հայաստանում բացել «Բուլուկյան» հիմնադրամի մասնաճյուղ, ինչպես նաև քարոզչական աշխատանքներ իրականացնել, որպեսզի հայկական մշակութային կենտրոնները մասնակցեն հիմնադրամի կողմից կազմակերպվող մրցույթներին: Նախարարի հրավերով Հիմնադրամի

պատասխանատուները 2018 թվականի մայիսին կայցելեն Հայաստան՝ քննարկելու հետագա գործակցության հնարավորությունները:

- Նույն օրը ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպել է Գրենոբլ քաղաքի քաղաքապետ Էրիկ Պիոլի հետ: Զրույցի ընթացքում նախարարն ու քաղաքապետը կարևորել են Գրենոբլի տարբեր ոլորտների զարգացման գործում հայերի ակտիվ մասնակցությունը: Քննարկվել են Սևան և Գրենոբլ քույր քաղաքների համագործակցությանը վերաբերող հարցեր, մասնավորապես՝ տուրիզմի, և էկոլոգիայի ոլորտներին առնչվող: Նախարար Հրանուշ Հակոբյանը շնորհակալություն է հայտնել քաղաքապետ Պիոլին հայ համայնքին, հայկական մշակույթի տան գործունեությանն աջակցելու համար: Էրիկ Պիոլին նշել է, որ հայերը սիրված են իր և գրենոբլցիների կողմից: Նախարարը Գրենոբլի քաղաքապետի հետ քննարկել է տարբեր համալսարանների հետ կապերի ամրապնդումը, մանավանդ, որ քաղաքը համարվում է համալսարանական քաղաք:

Նոյեմբերի 28, 2017թ.

Երեկոյան նախարարը ժամանեց Ժնև:

Նոյեմբերի 29, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարարն այցելել է Ժնևի Սուրբ Հակոբ եկեղեցի և հանդիպել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Շվեյցարիայի թեմի Առաջնորդական տեղապահ Տեր Գուսան վարդապետ Ալաջանյանին:
- Այնուհետև Հրանուշ Հակոբյանը եղել է եկեղեցուն կից գործող «Թոփալյան» վարժարանում, որտեղ նախարարին Եռագույն դրոշներով դիմավորել են վարժարանի սաները: Դպրոցում շրջայց կատարելուց հետո Հրանուշ Հակոբյանը հանդիպում է ունեցել «Թոփալյան» վարժարանի տնօրինության և ուսուցչական կազմի հետ: Հրանուշ Հակոբյանը շրջայց է կատարել նաև Գրիգոր Լուսավորիչ կենտրոնի գրադարանում, ծանոթացել ստեղծման պատմությանը:
- Այնուհետև նախարարն այցելել է Ժնևի հայկական կենտրոն և հանդիպել հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որոնց ներկայացրել է Սփյուռքի նախարարության իրականացրած ծրագրերը և ապագա անելիքները, խոսել նախարարության գերակա ուղղությունների մասին: Հանդիպմանը

հաջորդել է պարգևատրման արարողությունը: Նախարարը պարգևներ է հանձել հայ համայնքի ներկայացուցիչներին: Ավարտին Հրանուշ Հակոբյանը պատասխանել է հայ համայնքի անդամների հարցերին, որոնք հիմնականում վերաբերել են Հայաստան-Սփյուռք գործակցությանը, հայապահպանության, մայրենի լեզվի հիմնախնդիրներին:

Նոյեմբերի 30, 2017թ.

Նախարարը ժամանեց Մարսել:

- Երեկոյան նախարարը հանդիպել է սրտաբան Ավետիս Մատիկյանի հետ, ով Գորիսում իրականացնում է սրտաբանական ծրագրեր: Վերջինս նախարարի առջև բարձրացրել է Գորիսում դեպի կլինիկա տանող ճանապարհի վերանորոգման հարցը:

Դեկտեմբերի 1, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպել է Բուշ Դյու Ռոնի մարզպետ տիկին Մարտին Վասսալի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի հետ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր: Մասնավորապես՝ նախարարը նշել է, որ 2018թ. հոկտեմբերին Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի՝ Հայաստանում անցկացնելու առթիվ տեղի է ունենալու բիզնես ֆորում, որտեղ իր կարևոր մասնակցությունը պետք է ունենա Ֆրանս-հայկական առևտրային պալատը: Բիզնես կապերի և տուրիզմի զարգացման համար նշվել է նաև Երևան-Մարսել և հակառակ ուղղությամբ ուղիղ ավիաչվերթի բացման կարևորության մասին: Մարզպետը նշել է, որ արդեն իսկ տարվում են համապատասխան աշխատանքներ և այս հարցում իր մեծ մասնակցությունն ունի նաև առևտրային պալատը: Մարզպետը նշել է, որ իրենք համագործակցում են Արմավիր մարզի հետ և պլանավորում են հաջորդ տարի աշնանը և 2019թ. գարնանը պատվիրակությունով այցելել Հայաստան և մարզի հետ ստորագրել համագործակցության հուշագիր: Նախարարն առաջարկել է, որ մինչ հուշագրի ստորագրումը նպատակահարմար կլինի, որպեսզի կատարվեն անրաժեշտ քայլեր կրթության, երիտասարդության միջև կապերի զարգացման առումով: Առաջարկել է նաև հաջորդ տարի ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում փորձել Հայաստանում վերցնել երկու դպրոց և ներդնել ֆրանսերենի

խորացված ուսուցում: Երիտասարդության միջև կապերի զարգացման առումով նախարարը նշել է, որ Հայաստանում ստեղծվել է երիտասարդական պառլամենտ և կարելի է փորձել նրանց միջոցով զարգացնել և ամրապնդել կապերը Բուշ դյու Ռոնի մարզպետարանի աջակցությամբ ստեղծված երիտասարդական խորհդի միջև: Նախարարն անդրադարձել է նաև սիրիահայության և Սիրիայի փախստականների խնդիրներին՝ նշելով, որ մինչև օրս Սիրիայից շուրջ 22.000 մարդ է տեղափոխվել և բնակություն հաստատել Հայաստանում, որոնց թվում հայերից զատ կան նաև մեծ թվով եզդիներ, քրդեր, արաբներ, ասորիներ և այլ ազգեր: Նախարարն ընդգծել է, որ Հայաստանն աշխարհում երրորդ տեղում է Սիրիայից փախստականներ ընդունելու թվաքանակի առումով և անկախ ազգությունից պետությունը նրանց աջակցում է բնակարանների վարձավճարների ապահովման, անվճար բուժսպասարկման, բիզնես հարցերի, բուհերում կրթության համար ուսման վարձի փոխհատուցման հարցերով: Նախարարը նշել է նաև, որ ըստ ՄԱԿ-ի տվյալների, Հայաստանը լավագույն փորձն ունի Սիրիայից գաղթած մարդկանց ինտեգրման հարցերի լուծման առումով:

- Այնուհետև նախարարը հանդիպել է Մարսելի քաղաքապետ Ժան Կլոդ Գոդենի հետ, շնորհակալություն հայտնել Մարսելում Հայաստանին նվիրված հուշարձանի բացման, ինչպես նաև Սողոմոն Թեհլերյանին նվիրված պուրակի բացման համար: Նախարարը նշել է, որ անհրաժեշտություն կա Մարսել-Երևան չվերթ ստեղծելու համար: Քաղաքապետը նշել է, որ, իհարկե, չվերթի բացման հարցերը քաղաքապետարանի լիազորությունների շրջանակից դուրս են, սակայն, եթե այդ հարցով իրենք կարող են օգտակար լինել, ապա սիրով կաջակցեն դրան: Նախարարն անդրադարձել է Կերպարվեստի հիմնադրամի նախաձեռնությամբ հաջորդ տարվա ընթաքում Փարիզում, Մարսելում և Լիոնում կազմակերպվող ցուցահանդեսներին և նշել, որ Մարսելում այդ ցուցահանդեսը կազմակերպելու համար անհրաժեշտ է համապատասխան ցուցասրահ: Քաղաքապետը նշել է, որ սիրով կաջակցի ցուցահանդեսի կազմակերպմանը: Հանդիպման ընթացքում խոսվել է նաև 2018թ. Երևանում կայանալիք Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի նախապատրաստական աշխատանքների մասին: Նախարարը նշել է, որ քաղաքապետը և փոխքաղաքապետը Երևանում սպասված հյուրեր են:

- Նույն օրը ՀՀ սփյուռքի նախարարը մասնակցել է Մարսելում Ֆրանս-հայկական առևտրաարդյունաբերական պալատի հիմնադրման 25-ամյակի հոբելյանական տոնակատարությանը, որտեղ նախարարը հանդես է եկել ողջույնի խոսքով: Նախարարն իր խոսքում անդրադարձել է Հայաստանում բիզնես ներդրումներ կատարելու կարևորությանը՝ նշելով, որ Հայաստանի կառավարությունը քայլ առ քայլ ստեղծում է բոլոր այն անհրաժեշտ պայմանները, որպեսզի սփյուռքի ներդրողը կարողանա բիզնես հիմնել և շահույթ ստանալ հայրենիքում: Նախարարը նշել է նաև, որ նախարարությունը պատրաստ է յուրաքանչյուր գործարարի հետ անհատական աշխատանք տանել և տրամադրել աջակցություն: Երեկոյի ընթացքում տեղի է ունեցել նաև Հայ-ֆրանսիական բիզնես կապերի և ներդրումների գործում զգալի ներդրում ունեցած անձանց պարգևատրման արարողություն, որի շրջանակներում նախարարը ՀՀ սփյուռքի նախարարության «Պողոս նուբար» մեդալով է պարգևատրել պալատի հիմնադիր Ժան Կլոդ Ուտուզյանին և պալատի ներկայիս նախագահ Բեռնարդ Հատեմյանին, իսկ նախարարության երախտագիտության մեդալով պարգևատրվել են նշանավոր լրագրող Վալերի Թորանյանը և Ֆրանսիայի հայկական կազմակերպությունները համակարգող միության Մարսելի մասնաճյուղի համանախագահ Սիմոն Ազիլազյանը:

Դեկտեմբերի 2, 2017թ.

Առավոտյան նախարարը վերադարձել է Երևան:

8. Գործուղվողը՝
Հրանուշ Հակոբյան

9. Ստորագրությունը, ամսաթիվը
06. 12. 2017թ.